ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-239[2] -20.04.2022-ՏԵ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** օրենքի նախագծի 1-ին հոդված:	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Բժշկական օգնության և սպասարկման մասին» բառերը փոխարինել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» բառերով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագիծը խմբագրվել է՝ նախագծի 1-ին հոդվածում «Բժշկական օգնության և սպասարկման մասին» բառերը փոխարինվել են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» բառերով:	**Ընդունվել է:**
2.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 1-ին հոդված, 2-րդ հոդված (46-րդ հոդվածի 14-րդ, 47.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ, 47.2-ին հոդվածի 6-րդ, 47.4-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մաս):	Օրենքի նախագծի լրիվ անվանման հիշատակման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է:** Օրենքի նախագիծը խմբագրվել է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է:**
3.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված:	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 10-րդ գլխում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերն իր հոլովաձևերով փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք	**Ընդունվել է:** Օրենքի նախագիծը խմբագրվել է՝ նախագծի 2-րդ հոդվածում Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող	**Ընդունվել է:**

			ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:	10-րդ գլխում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերն փոխարինվել է «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:	
4.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված:	Օրենքի նախագիծը խմբագրել՝ կիրառելով հետևյալ հերթականությունը՝ «բժշկական արտադրատեսակների անվտանգության, որակի և արդյունավետության»:	**Ընդունվել է:** Օրենքի նախագիծը խմբագրվել է՝ կիրառելով հետևյալ հերթականությունը՝ «բժշկական արտադրատեսակների անվտանգության, որակի և արդյունավետության»:	**Ընդունվել է:**
5.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (46-րդ հոդվածի 5-րդ մաս և 47-րդ հոդվածի վերնագիր):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասում, 47-րդ հոդվածի վերնագրում «կլինիկա-լաբարատորային փորձարկումներ» ձևակերպումը փոխարինել «կլինիկա-լաբարատոր փորձարկումների (հետազոտությունների)» ձևակերպմամբ:	**Ընդունվել է:** Օրենքի նախագիծը խմբագրվել է՝ «կլինիկա-լաբարատոր փորձարկումներ (հետազոտություններ)» արտահայտությունը փոփոխվել է համապատասխան հոլովաձևերով:	**Ընդունվել է:**
6.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (46-րդ հոդվածի 8-րդ և 13-րդ մասեր):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ և 13-րդ մասերում «խորհրդի» բառը փոխարինել «կոլեգիայի» բառով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

7.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (46-րդ հոդվածի 10-րդ մաս և 11-րդ մաս):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 46-րդ հոդվածի 10-րդ մասում «բաղադրիչներ» բառը փոխարինել «բաղկացուցիչ մաս» բառերով, 11-րդ մասի «խմբին» բառն՝ «շարքին» բառով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
8.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (47.1-ին հոդվածի 7-րդ մաս):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 47.1-րդ հոդվածի 7-րդ մասում «պահանջների համաձայն» բառերը փոխարինել «պահանջների բավարարելու նպատակով» բառերով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագիծը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «Արտադրողը պետք է ստեղծի, փաստաթղթավորի, ներդնի և պահպանի ռիսկերի կառավարման համակարգ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի N 27 որոշմամբ հաստատված ընդհանուր պահանջները բավարարելու նպատակով:»:	**Ընդունվել է:**
9.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (47.4-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մաս):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 47.4-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Բժշկական սարքավորումների» ձևակերպումը փոխարիել «Բժշկական արտադրատեսակների» բառերով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծի 47.4-րդ հոդվածի վերնագրում, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին և 6-րդ մասերում «Բժշկական սարքավորումների» ձևակերպումը փոխարինվել է «Բժշկական արտադրատեսակների» ձևակերպմամբ:	**Ընդունվել է:**

10.	***<< կառավարություն***	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (47.4-րդ հոդվածի 2-րդ մաս):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 47.4-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Բժշկական արտադրատեսակներ արտադրող ընկերության կողմից տվյալ բժշկական արտադրատեսակների սպասարկման իրավասություն ունեցող կամ բժշկական արտադրատեսակներ արտադրող կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական ներկայացուցչի կարգավիճակ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, կամ անհատ ձեռնարկատերերըառանց բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի առկայության, կարող են իրականացնել իրենց կողմից արտադրված բժշկական սարքավորումների սպասարկում»:	**Ընդունվել է:** Առանց բժշկական արտադրատեսակ-ների սպասարկման լիցենզիայի առկայության բժշկական արտադրատեսակների սպասրկման թույլտվություն ունեցող սուբյեկտների շրջանակը հստակեցնելու նպատակով Օրենքի նախագծի 47.4-րդ հոդվածի 2-րդ կետը խմբագրվել է: Մասնավորապես սահմանվել է, որ բժշկական արտադրատեսակներ արտադրող ընկերության կողմից տվյալ բժշկական արտադրատեսակների սպասարկման իրավասություն ունեցող կամ բժշկական արտադրատեսակներ արտադրող կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական ներկայացուցչի կարգավիճակ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, կամ անհատ ձեռնարկատերերը առանց բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի առկայության, կարող են իրականացնել իրենց կողմից արտադրված բժշկական սարքավորումների	**Ընդունվել է:**

				սպասարկում:	
11.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (47.4.-րդ հոդվածի 6-րդ մաս):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 47.4.-րդ հոդվածի 6-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ «Վերանորոգումից հետո բժշկական արտադրատեսակների անվտանգության մակարդակը չպետք է ցածր լինի բժշկական արտադրատեսակների -տեխնիկական անձնագրով սահմանված անվտանգության մակարդակից:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
12.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված (47.4.-րդ հոդվածի 7-րդ մաս):	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 47.4.-րդ հոդվածի 7-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ «Չափման միջոցների շարքին դասվող բժշկական արտադրատեսակների չափագիտական ապահովման կազմակերպումը կարգավորվում է չափումների միասնականությունն ապահովելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
13.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի վերնագիր:	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրն հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	**Ընդունվել է.** Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը հանվել է:	**Ընդունվել է:**
14.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 3-րդ հոդված (3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր):	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում «47.1» գրելաձևը փոխարինել «47.1-ին», «47.2» գրելաձևը՝ «47.2-րդ» «47.1-րդ» գրելաձևը՝ «47.1-ին» գրելաձևերով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

15.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 3-րդ հոդված (հոդվածի 1-ին մաս):	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո»:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
16.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 3-րդ հոդված (3-րդ հոդվածի 5-րդ մաս):	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում լրացնել նոր 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Օրենքի 47.4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները մինչև 2024 թվականի հունվարի 1-ը չեն տարածվում մինչև սույն օրենքը ուժի մեջ մտնելու օրը Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների վրա»:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
17.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 3-րդ հոդված (3-րդ հոդվածի 5-րդ մաս):	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ մասում հղում է կատարվում օրենքի 47.4-րդ հոդվածի 2-րդ մասին, մինչդեռ, կարծում ենք, հղումը պետք է կատարել 47.4-րդ հոդվածի 3-րդ մասին:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
18.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 3-րդ հոդված (3-րդ հոդվածի 7-րդ; 8-րդ մասեր):	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ; 8-րդ մասեր՝ (7. Օրենքի 47.1-ին հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է մտնում բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզավորման կարգը ուժի մեջ մտնելուց հետո): (8. Օրենքի 47.4-րդ հոդվածի 1-ին մասը ուժի մեջ մտնում բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգը ուժի մեջ մտնելուց հետո):	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
19.	*ՀՀ կառավարություն*	**Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օ**րենքի նախագծի 1-ին հոդված:	Օրենքի նախագծի լրիվ անվանման հիշատակման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան	**Ընդունվել է:**

				փոփոխություններ:	
20.	*ՀՀ կառավարություն*	**«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրենքի նախագծի 1-ին հոդված:	Օրենքի նախագծի լրիվ անվանման հիշատակման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
21.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ:	Օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների «ՀՈԴՎԱԾ» բառը փոխարինել «Հոդված» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
22.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 1-ին հոդված:	Օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ օրենք)» ձևակերպումը:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
23.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 1-ին հոդված:	Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում «35.2», 2-րդ կետում «2.10» և 4-րդ կետում «52.1» գրելաձևերն փոխարինել համապատասխանաբար «35.2-րդ», «2.10-րդ» և «52.1-ին» գրելաձևերով՝ ապահովելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

24.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 1-ին հոդված (1-ին հոդվածի 3-րդ կետ):	Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետում շտկել վրիպակը՝ «բաժինում» բառը փոխարինելով «բաժնում» բառով:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
25.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 2-րդ հոդված:	Օրենքի նախագծի հոդված 2-ը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից»:	**Ընդունվել է:** Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**